Սերտիֆիկացման մարմնի անվանման և սերտիֆիկացման նշանի կամ պատկերանիշի (լոգո) կիրառումը

Սերտիֆիկացման մարմնի անվանման և սերտիֆիկացման նշանի կամ պատկերանիշի (լոգո) կիրառումը ԿՀՍՄ-ի կողմից իրականացվում է ներքին ընթացակարգի համաձայն՝ «Գերմանական սերտիֆիկացման սարմին» ՍՊԸ ԿՀՍՄ-ն իր գործունեության ընթացքում ՀԱՄ պատկերանիշը կարող է կիրառել՝

- հավատարմագրման ոլորտի շրջանակներում մատուցվող ծառայությունների արդյունքում տրամադրվող Փաստաթղթերում՝ սերտիֆիկատներում,
- ձևաթղթերի վրա,
- գովազդային նյութերում, հրատարակություններում,
- պաշտոնական ինտերնետային կայքում:

Հավատարմագրման նշանը կարող է կիրառվել միայն ԿՀՍՄ պատկերանիշի հետ համատեղ՝

AST ISO/IEC 17021-1

007/M-007

ԿՀՍՄ-ի կողմից մատուցվող ծառայությունների արդյունքում տրամադրվող փաստաթղթերում առկա հավատարմագրման նշանը ցուցադրում է հավատարմագրման իր ոլորտում գործունեություն իրականացնելու իրավասությունը:
Հավատարմագրման նշանը, տեքստային վկայակոչումը չի թույլատրվում կիրառել.

- այնպիսի եղանակով, որ ենթադրվի, որ ՀԱՄ-ն է պատասխանատվություն կրում ԿՀՍՄ-ի հավատարմագրման ոլորտի շրջանակներում մատուցվող ծառայությունների արդյունքների համար,
- այնպիսի եղանակով, որ ենթադրվի, որ ՀԱՄ-ն է հաստատել համապատասխանության գնահատման առարկան՝ կառավարման համակարգը,
- ԿՀՍՄ-ի կողմից մատուցվող ծառայությունների արդյունքում տրամադրվող Փաստաթղթերում, որոնք չեն պարունակում հավատարմագրման գործունեության արդյունքներ: